**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-19/20-6**

ք. Երևան «_27_» __08__ 2019թ.

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը ի դեմս ռեկտոր Վ. Ուրուտյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Տիգրան Միրզոյան ԱՁ-ը, ի դեմս Տիգրան Միրզոյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար։

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի։

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի (հետ) պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագրի կատարումից և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը։

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով։

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը։

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին։

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները։

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին։

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը։

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից։

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները։

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը։

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները։

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը։

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները։

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը։

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով։

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի թվարկված դեպքերում և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Իր մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 662220 վեց հարյուր վաթսուներկու հազար երկու հարյուր քսան ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարման ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և անկանխատեսելի ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսով վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ծանուցումը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամ | ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ ԱՁ |
| ք. Երևան, Տերյան 74 | ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 78 |
| «Արդշինբանկ» ՓԲԸ | Արարատբանկ ԲԲԸ |
| Հ/Հ 247010053103 | Հ/Հ 1510023156880100 |
| ՀՎՀՀ 01507028 | ՀՎՀՀ 30972241 |
| Ռեկտոր ________ Վ. ՈՒՌՈՒՏՅԱՆ | ________ Տ. Սիրադեղյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| | Կ.Տ. |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ապրանքի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | Հատկանիշները (տեխնիկական բնութագիր) | Չափման միավորը | Միավոր գինը (ՀՀ դրամ) | Ընդհանուր քանակը | Գումար (ՀՀ դրամ) | Մատակարարման* | | |
| | | | | | | | | Հասցեն | Ենթակա քանակը | Ժամկետը |
| 11 | 30192233/1 | Սիլիկոն | Բարձրորակ մեկ բաղադրիչով քսանյութ, սիլիկոն 280մլ: Հատկությունները. աշխատանքի ընթացքում սիլիկոնը պնդանում է, դառնում է անջրաթափանց, կայուն, դիմացկուն ցանկացած տեսակի ազդեցության, այդ թվում լվացող միջոցների և օրգանական լուծիչների հանդեպ: Օգտագործվում է շինարարական աշխատանքների կատարման, (խոհանոցներում և լոգասենյակներում, օդափոխման համակարգերում) մեքենաների և նավաշինության մեջ, ինչպես նաև ապակիների տեղադրման և հերմետիկացման համար, հայելիների և այլ մակերեսների համար: Համապատասխանում է ներքին և արտաքին աշխատանքների համար: Հերմետիկը հիմնականում ամրացվում է ապակի, մետաղ, կերամիկա, փայտ և այլն: Ջերմադիմացկուն է 45⁰ ից մինչև +125⁰: | կգ | 3350 | 26 | 87100 | ՀՀ, ք.Երևան, Տերյան 74 | 26 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 27 | 44111414/1 | Ներկ Լատեքս | Բաղադրությունը՝ ակրիլային սոպոլիմեր, արմիներային հավելանյութեր, պիգմենտներ և անօրգանական լցանյութեր: Նախատեսված է շինարարական ներքին մակերեսների (բետոն, գիպս, ծեփ, փայտ, պաստառ) և այլ ծածկույթների ներկման համար: Գույնը՝ ըստ պատվիրատուի պահանջի: Փաթեթավորումը՝ 25կգ պոլիպրոպիլենային տարաներ: [illegible]՝ 6 ամիս պիտանելիության ժամկետ: | կգ | 585 | 220 | 128700 | ՀՀ, ք.Վանաձոր, Արովյան 64 | 220 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 28 | 44111411/1 | Ներկ ջրադիսպերսիոն | Բաղադրությունը՝ ակրիլային սոպոլիմեր և անօրգանական լցանյութեր: Նախատեսված է շինարարական ներքին մակերեսների (բետոն, գիպս, ծեփ, փայտ, պաստառ) և այլ ծածկույթների ներկման համար: Գույնը՝ ըստ պատվիրատուի պահանջի: Փաթեթավորումը՝ | կգ | 450 | 80 | 36000 | ՀՀ, ք.Վանաձոր, Արովյան 64 | 80 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 25 կգ պոլիպրոպիլենային տարաներ: Առնվազն՝ 6 ամիս պիտանելիության ժամկետ: | | | | | | | |
| 34 | 44111200/1 | Ցեմենտ | Ցեմենտ պարկերով Մ 425, չափածրարված մինչև 50 կգ թղթյա պարկերով, գործարանային ավտոմատ լցված: Ոչ քարացած: | կգ | 55 | 1000 | 55000 | ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 | 1000 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 35 | 44111200/2 | Ցեմենտ | Ցեմենտ պարկերով Մ 425, չափածրարված մինչև 50 կգ թղթյա պարկերով, գործարանային ավտոմատ լցված: Ոչ քարացած: | կգ | 55 | 500 | 27500 | ՀՀ, Կոտայք, գ. Աղավնաձոր | 500 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 36 | 44111200/3 | Ցեմենտ | Ցեմենտ պարկերով Մ 425, չափածրարված մինչև 50 կգ թղթյա պարկերով, գործարանային ավտոմատ լցված: Ոչ քարացած: | կգ | 55 | 500 | 27500 | ՀՀ, Արմավիր, գ. Երասխահուն | 500 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 37 | 44111200/4 | Ցեմենտ | Ցեմենտ պարկերով Մ 425, չափածրարված մինչև 50 կգ թղթյա պարկերով, գործարանային ավտոմատ լցված: Ոչ քարացած: | կգ | 55 | 4200 | 231000 | ՀՀ, ք. Վանաձոր, Արովյան 64 | 4200 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 39 | 44192400/1 | Գաջ | Կապակցող և սորուն նյութ, բաց գույնի, փաթեթավորված պարկերով՝ 50կգ [illegible] | տոննա | 33000 | 1,70 | 56100 | ՀՀ, ք. Վանաձոր, Արովյան 64 | 1,70 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 42 | 24911900/1 | Սալիկի սոսինձ | Բաղադրություն՝ քվարցային ավազ, պորտլանդ ցեմենտ, պոլիմերային սոսինձ, ցելյուլոզային հավելանյութեր: Նախատեսված է ջերմապաշտպանված ներքին և արտաքին ծածկույթների (գիպս, գիպսակարտոն և այլն, չդեֆորմացվող մակերեսներ) վրա սալիկների (ծակոտկեն կերամիկական սալիկներ, բնական և արհեստական քարեր) փակցման աշխատանքների համար: Միջև և պոլիպրոպիլենային պարկեր՝ 25կգ զանգվածով: | կգ | 72 | 185 | 13320 | ՀՀ, ք. Վանաձոր, Արովյան 64 | 185 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում |

*Ալրանքը պետք է լինի չօգտագործված

**ԳՆՈՐԴ**
Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամ
ք. Երևան, Տերյան 74
Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 247010053103
ՀՎՀՀ 01507028
Ղեկավար ________ Վ. ՈՒՌՈՒՍՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ ԱՁ
ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 78
Արարատբանկ ԲԲԸ
Հ/Հ 1510023156880100
ՀՎՀՀ 30973241
________ Տ. Սիրադեղյան
/ստորագրություն/
Կ.Տ.

*Հավելված N 2*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/հ | Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման | Ապրանքի անվանումը | Վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ․ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | VIII | IX | X | XI | XII | Գումար (ՀՀ դրամ) |
| 11 | 30192233/1 | Սիլիկոն | 87100 | 87100 | 87100 | 87100 | 87100 | 87100 |
| 27 | 44111414/1 | Ներկ Լատեքս | 128700 | 128700 | 128700 | 128700 | 128700 | 128700 |
| 28 | 44111411/1 | Ներկ ջրադիսպերսիոն | 36000 | 36000 | 36000 | 36000 | 36000 | 36000 |
| 34 | 44111200/1 | Ցեմենտ | 55000 | 55000 | 55000 | 55000 | 55000 | 55000 |
| 35 | 44111200/2 | Ցեմենտ | 27500 | 27500 | 27500 | 27500 | 27500 | 27500 |
| 36 | 44111200/3 | Ցեմենտ | 27500 | 27500 | 27500 | 27500 | 27500 | 27500 |
| 37 | 44111200/4 | Ցեմենտ | 231000 | 231000 | 231000 | 231000 | 231000 | 231000 |
| 39 | 44192400/1 | Գաջ | 56100 | 56100 | 56100 | 56100 | 56100 | 56100 |
| 42 | 24911900/1 | Սալիկի սոսինձ | 13320 | 13320 | 13320 | 13320 | 13320 | 13320 |

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամ | ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ ԱՁ |
| ք. Երևան, Տերյան 74 | ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 78 |
| «Արդշինբանկ» ՓԲԸ | Արարատբանկ ԲԲԸ |
| Հ/Հ 2470010053103 | Հ/Հ 1510023156080100 |
| ՀՎՀՀ 01507028 | ՀՎՀՀ 30972241 |
| Ա. ՈՒՌՈՒՅԱՆ /ստորագրություն/ | Տ. Սիրադեղյան /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |